Սակայն, այն հանդամանքը, որ հարևան Ադրբէջանում յանկարծական յեղաշրջում կատարուեց, պատճառ եղաւ նման փորձ կատարելու նաև Հայաստանում:

Մենք շատերի հետ խօսելով ցոյց էինք տալիս, որ Հայաստանի ղեկավար կուսակցութիւնը թոյլ չի տայ, որ նրանք այստեղ քաղաքական դեր խաղան, որ երբեք չմտածեն, թէ կարող են քաղաքական բնոյթ ունեցող գործի ձեռնարկել, բայց նրանք կարծեցին, թէ Հայաստանի ղեկավար կուսակցութիւնը մեռած է. լինելով մտահոգ հայ ժողովրդի պաշտպանութեան խնդրով՝ չի հետևում նրանց քայլերին. կարծեցին թէ նա կազմալոյծ է և չունի այն կորովը, որ հանդէս է բերել տասնեակ տարիների ընթացքում: Մի ծանր հանդամանք նպաստեց նրանց յաջողութեանը. Հայաստանի կառավարութիւնը՝ ցանկանալով օր առաջ մեր երկիրն ազատել օտար պետութեանց վարկաբեկիչ խնամակալութիւնից՝ իր հացի պաշարը փոխանակեց սերմացուի հետ: Դրա հետևանքն եղաւ հացի ճգնաժամը և իբր արդիւնք վերջինիս՝ ժողովրդի խուլ դժգոհութիւնը: Այս հանդամանքը նրանք համարեցին լաւ հող՝ ցանելու իրենց խռովութեան սերմերը: Բայց որովհետև հաւատ չունէին ժողովրդի մէջ և չունէին հետևորդներ, ընտրեցին կուլ այնպիսի միջոց, որ, թէպէտ, անարժէք էր ինքնին, բայց կարող էին ժամանակաւոր չափով առաջ բերել. նրանք դիմեցին ստի և խաբէութեան՝ տարածելով լուրեր, որ իբր թէ Լենինը 150,000 փութ ալիւր է ուղարկում Հայաստան, որ 10,000 մեծամասնական դօրքեր Ղազախի վրայով գալիս են դէպի մեզ, որ մեր որբերը կուղարկուեն Կուբան՝ խնամուելու Ռուսաստանի հաշուով և այլն, և այլն: Այս ստերով նրանք աշխատեցին յուզել ժողովրդի միտքն ու պարարտացնել դժգոհութեան հողը:

Իսկ ո՞վքեր էին այդ շարժման ղեկավարները. նրանց մէջ կային անարժէք, մարդկային արժանապատուութիւնից միանդամայն զուրկ մարդիկ՝ գողեր, աւազակներ, վատնիչներ: Ահա ձեզ մի օրիորդ՝ Կարսի մեծամասնական՝ գող դեռ աշակերտական նստարանից, մի ինչ որ սպայ Զմշկեան՝ թալանչի և վատնիչ դնդի գումարի, մի Տէր Գրիգորեան՝ գող ամերիկեան որբանոցային պահեստի: Այսպէս՝ գողեր, աւազակներ, սրիկաներ, և խաբեբաներ հաւաքուել էին այդ շարժման շուրջը՝ կարծելով, թէ նորից դիրքի կը տիրանան ու կը շարունակեն իրենց շահատակութիւնները:

Որովհետև անարժէք էր նրանց կուլ միջոցը, որովհետև ղեկավարների 90 տոկոսը պարզ գողեր էին, ուստի շարժումը վիժեց խայտառակ ձևով և արագութեամբ. այդ շարժումը երբեք չի կարող համարուել գաղափարական և դէպի նա մենք կարող ենք միայն զզուանք ու արհամարհանք տածել. դա ոչինչ շարժում էր և գործով ապացուցեց իր ոչնչութիւնը:

Ամենից հետաքրքրականն այս շարժման վախճանի մէջ այն է, որ նրան վերջ տուեց հայոց ժողովուրդը. օրքն իր գլուխը կորցրած էր. ոմանք դաւաճանեցին, ոմանք տատանուում էին, ոմանք անտարբեր էին. անպէտք դուրս եկաւ պաշտօնէութիւնը: Միայն ժողովուրդն էր, որ ցուցահանեց առողջ բնաղդ, առողջ ըմբռնում և առանց դէնքի ճնշեց խռովութիւնը:

Մեծ էր ժողովրդական ցասումը. թէպէտ թոյլ են մեր հաղորդակցութեան միջոցները, թէպէտ չունենք, անդամ, թուղթ տալելու ամէն ինչ և տարածելու ժողովրդի մէջ, բորբոքելու միտքն ու պայծառացնելու գիտակցութիւնը, բայց և այնպէս, զարմանալիօրէն միատեսակ մտածման, միատեսակ զգացման և կամքի միութեան հետևանքով վերջ տուեց խայտառակութեանը: